ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՆՈՐԴՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ

ՄԱՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ, Մանկավարժության ամբիոն,
Կրթության կառավարում, 2-րդ կուրս
maratmkrtchyan6@gmail.com

DOI: 10.54503/978-9939-481-23-4-217

Համառոտագիր

Անվտանգությունը հասարակության առանցքային արժեքներից է: Հանրային և աշխատանքային միջավայրում մարդկանց ֆիզիկական և հոգեբանական պաշտպանվածությունը ապահովելու համար անհրաժեշտ է, որ անվտանգության ոլորտի մասնագետները կարողանան հայտնաբերել հնարավոր վտանգները, գնահատել դրանց նշանակությունը և կիրառել կանխարգելիչ միջոցառումներ: Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում մասնավոր պահնորդական գործունեության ոլորտում կրթության դերի ուսումնասիրությանը՝ անվտանգության արդյունավետ ապահովման և կանխարգելիչ գործունեության համատեքստում:

Հոդվածի նպատակը պահնորդների մասնագիտական պատրաստվածության համակարգի գնահատումն է և կրթության ազդեցության բացահայտումը կանխարգելիչ գործողությունների արդյունավետության վրա:

Հետազոտության տեսական հատվածում ներկայացվել են մասնավոր պահնորդական գործունեության իրավական հիմքերը, ոլորտի լիցենզավորման կարգավորումները և ՀՀ-ում գործող մասնագիտացված ուսումնական կենտրոնների գործունեությունը: Հիմնավորվում է, որ պահնորդների կրթությունը պետք է դիտարկել որպես անվտանգության ոլորտում մարդկային ռեսուրսների կառավարման կարևոր բաղադրիչ, որը նպաստում է մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը, իրավական գիտելիքների ամրապնդմանը և ռիսկերի կանխարգելմանը:

Էմպիրիկ հետազոտության նպատակով իրականացվել է սոցիոլոգիական հարցում «Գարդիան» անվտանգության ծառայության 25 պահնորդների շրջանում՝ հարցաթերթիկի միջոցով: Տվյալների վերլուծությունը կատարվել է նկարագրական և վիճակագրական մեթոդներով:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների մեծամասնությունը կրթությունը դիտարկում է որպես պահնորդական գործունեության կարևոր գործոն: Բարձր է նաև պարբերական վերապատրաստումների մասնակցության մակարդակը, ինչը վկայում է շարունակական մասնագիտական զարգացման անհրաժեշտության գիտակցման մասին: Միևնույն ժամանակ արձանագրված «մասամբ» պատասխանների զգալի տոկոսը մատնանշում է կրթական ծրագրերի բովանդակային խորացման, կանխարգելիչ բաղադրիչի ուժեղացման և ռիսկերի կառավարման գործնական հմտությունների զարգացման անհրաժեշտությունը: Արդյունքները նաև ցույց են տալիս, որ կրթությունն ու փորձը դիտարկվում են որպես փոխլրացվող գործոններ՝ անվտանգության արդյունավետ ապահովման գործընթացում:

Ընդհանուր առմամբ, հոդվածում հիմնավորվում է, որ պահնորդների կրթության և վերապատրաստման համակարգի շարունակական կատարելագործումը կարող են էականորեն նպաստել կանխարգելիչ գործունեության արդյունավետության բարձրացմանը և անվտանգության համակարգի զարգացմանը:

Հետազոտության մեթոդներ՝ նկարագրական, վիճակագրական, իրավական ակտերի և նորմատիվ փաստաթղթերի վերլուծություն, սոցիոլոգիական հարցում:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ մասնավոր պահնորդական գործունեություն, մասնագիտական վերապատրաստում, կանխարգելիչ միջոցառումներ, անվտանգության համակարգ:

THE IMPACT OF EDUCATION ON THE FORMATION OF PREVENTIVE PROFESSIONAL COMPETENCIES OF SECURITY GUARDS

MARAT MKRTCHYAN

National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific–Educational Centre
Department of Pedagogy, Educational Management, MA student
maratmkrtchyan6@gmail.com

Abstract

Security is one of the key values of society. To ensure the physical and psychological protection of people in public and working environments, security professionals must identify potential threats, assess their significance, and implement preventive measures. This article is devoted to the study of the role of education in the private security sector in the Republic of Armenia in the context of effective security and preventive activities.

The purpose of the article is to assess the system of professional training of security guards and identify the impact of education on the effectiveness of preventive actions.

The theoretical part of the research presents the legal foundations of private security activities, licensing regulations in the sector, and the activities of specialised training centres operating in the Republic of Armenia. The education and training of security guards should be considered an important component of human resource management in the security sector, contributing to the development of professional competencies, strengthening legal knowledge, and risk prevention.

A sociological survey was conducted among 25 guards of the “Guardian” security service using a questionnaire. Data analysis was performed using descriptive and statistical methods.

The survey results show that the majority of respondents consider education an important factor in guarding activities. The level of participation in periodic training is also high, which indicates the awareness of the need for continuous professional

development. At the same time, a significant percentage of the recorded "partial" responses indicate the need for deepening the content of educational programs, strengthening the preventive component, and developing practical risk management skills. The results also show that education and experience are considered complementary factors in the process of effective security provision.

In general, the article substantiates that the continuous improvement of the education of guards can significantly contribute to increasing the effectiveness of preventive activities and developing the security system.

Research methods: descriptive, statistical, analysis of legal acts and regulatory documents, sociological survey.

Keywords and phrases: Private security, professional training, preventive measures, security system.

ВЛИЯНИЕ ОБРАЗОВАНИЯ НА ФОРМИРОВАНИЕ ПРОФЕССИОНАЛЬНЫХ КОМПЕТЕНЦИЙ ОХРАННИКОВ В ОБЛАСТИ ПРОФИЛАКТИКИ

МАРАТ МКРТЧЯН

Международный научно-образовательный центр Национальной академии наук Республики Армения, факультет педагогики, образовательный менеджмент, 2 курс

maratmkrtchyan6@gmail.com

Аннотация

Безопасность является одной из ключевых ценностей общества. Для обеспечения физической и психологической защиты людей в общественной и рабочей среде необходимо, чтобы специалисты по безопасности умели выявлять потенциальные угрозы, оценивать их значимость и применять профилактические меры. Данная статья посвящена изучению роли образования в частном секторе безопасности Республики Армения в контексте эффективной охранной и профилактической деятельности.

Цель статьи – оценить систему профессиональной подготовки охранников и определить влияние образования на эффективность профилактических мероприятий.

Теоретическая часть исследования представляет правовые основы деятельности частных охранных компаний, лицензионные правила в секторе и деятельность специализированных учебных центров, действующих в Республике Армения. Обосновывается, что образование и обучение охранников следует рассматривать как важную составляющую управления человеческими ресурсами в секторе безопасности, способствующую формированию профессиональных компетенций, укреплению правовых знаний и предотвращению рисков.

В ходе социологического исследования с 25 охранниками охранной

службы «Гардиан» был проведен опрос с использованием анкеты. Анализ данных осуществлялся описательными и статистическими методами.

Результаты опроса показывают, что большинство респондентов считают образование важным фактором в охранной деятельности. Высокий уровень участия в периодическом обучении свидетельствует об осознании необходимости непрерывного профессионального развития. При этом значительный процент «частичных» ответов указывает на необходимость углубления содержания образовательных программ, усиления профилактической составляющей и развития практических навыков управления рисками. Результаты также показывают, что образование и опыт рассматриваются как взаимодополняющие факторы в процессе эффективного обеспечения безопасности.

В целом, статья обосновывает, что непрерывное совершенствование системы образования охранников может существенно способствовать повышению эффективности профилактической деятельности и развитию системы безопасности.

Методы исследования: описательные, статистические, анализ правовых актов и нормативных документов, социологический опрос.

Ключевые слова и фразы: частная охрана, профессиональная подготовка, профилактические меры, система безопасности.

Ներածություն

2012 թվականի փետրվարի 9-ին ընդունված «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքով պաշտոնապես սահմանվեցին մասնավոր պահնորդական գործունեության իրավական հիմքերը, ինչը հնարավոր դարձրեց անվտանգության ծառայությունների գործունեության օրինական կարգավորումը **[1]**: 2014 թվականից սկսած՝ թիկնապահական և պահնորդական գործունեության լիցենզավորումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված ընթացակարգերի համաձայն **[2]**: Լիցենզավորման այս գործընթացը բավական բարդ և բազմակողմանի է, և դրա հաջող ավարտից հետո կազմակերպությունը իրավասու է սկսել անվտանգության ծառայությունների մատուցումը:

Այժմ ՀՀ տարածքում գործում են 90-ից ավելի մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպություններ **[3]**: Չնայած որ մասնավոր պահնորդական գործունեությունը կարևոր է հասարակության անվտանգության ապահովման գործում, այն հաճախ բախվում է որակավորված աշխատուժի պակասի հետ: Սա մեզ ուղղորդում է ուսումնասիրել, թե ինչպես է կազմակերպվում պահնորդների կրթությունը և վերապատրաստումը, ու ինչ պայմաններ են ստեղծվում նրանց մասնագիտական զարգացման համար: Պահնորդների կրթության և վերապատրաստման գործընթացը պետք է դիտարկել որպես անվտանգության ոլորտում մարդկային ռեսուրսների կառավարման կարևոր բաղադրիչ: Այն ուղղված է մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը, իրավական գիտելիքների ամրապնդմանը և գործնական հմտությունների կատարելագործմանը: Հայաստանի Հանրապետությունում անվտանգության ոլորտում գործունեություն իրականացնող մի շարք մասնագիտացված կազմակերպություններ իրականացնում են թիկնապահների և պահնորդների վերապատրաստման ծրագրեր: Դրանցից առանձնանում են հետևյալները.

«Պահապան Արծիվ» ակադեմիան, որը կազմակերպում է տեսական և գործնական դասընթացներ, ներառյալ՝ ֆիզիկական պատրաստվածություն, կրակային վարժություններ և իրավական գիտելիքների ուսուցում: Դասընթացները ավարտելուց հետո մասնակիցներին տրվում է որակավորման վկայական՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության լիցենզիայի հիմքով:

«Բերկուտ» ուսումնական կենտրոնը, որն իրականացնում է անվտանգության ծառայողների, պահնորդների և անձնական թիկնապահների մասնագիտական պատրաստվածություն: Ծրագրերը ներառում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական բաղադրիչներ, որոնք ուղղված են մասնագիտական կարողությունների կատարելագործմանը:

«Արմոբիլ» պահնորդական ընկերությունը, որն առաջարկում է «Անվտանգության և բիզնես էթիկայի ուսուցում» վերապատրաստման ծրագրեր: Դրանք ընդգրկում են անվտանգության ապահովման հիմունքներ, արտակարգ իրավիճակներում արձագանքման հմտություններ և օբյեկտների անվտանգության պահպանման կանոններ:

«Guard Eagle Security Academy» ուսումնական կենտրոնը, որը մասնագիտացված է անձնական թիկնապահների և պահնորդների պատրաստման հարցում՝ ընդգրկելով ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական պատրաստվածության տարրեր:

ՍԻԱՍ (Անվտանգության միջազգային հատուկ ակադեմիա), որը գործում է Երևանում և կազմակերպում է պահնորդների, թիկնապահների և անվտանգության ոլորտի այլ մասնագետների վերապատրաստում: Ծրագրերը ներառում են տեսական և գործնական պարապմունքներ, որոնց նպատակն է բարձրացնել մասնակիցների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները: Ակադեմիան ապահովում է նաև իրավական, ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածության բաղադրիչներ՝ մասնագիտական որակի բարձրացման նպատակով:

Այս կազմակերպությունների կողմից իրականացվող կրթական ծրագրերը մեծապես նպաստում են անվտանգության ծառայողների մասնագիտական որակների բարձրացմանը, կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության ապահովմանը և ընդհանուր անվտանգության համակարգի կատարելագործմանը: Վերոնշյալ կազմակերպությունների գործունեությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում ձևավորված է պահնորդների մասնագիտական պատրաստման որոշակի ինստիտուցիոնալ համակարգ: Սակայն անհրաժեշտ է գնահատել, թե որքանով են այդ ծրագրերը համապատասխանում գործնական պահանջներին, և ինչպես են դրանք ընկալվում ոլորտում աշխատող մասնագետների կողմից: Այդ նպատակով մեր կողմից իրականացվել է սոցիոլոգիական հարցում անվտանգության ծառայողների շրջանում՝ պարզելու նրանց կրթության մակարդակը, վերապատրաստման արդյունավետության գնահատականը և մասնագիտական զարգացման վերաբերյալ դիրքորոշումները: Մեր կողմից իրականացվել է սոցիոլոգիական հարցում «Գարդիան» անվտանգության ծառայության պահնորդների շրջանում՝ մեր կողմից կազմված հարցաթերթերի միջոցով: Յուրաքանչյուր հարցաթերթ բաղկացած էր 10 հարցից: Հարցմանը մասնակցել է 25 պահնորդ, որից 22-ը՝ տղամարդ, 3-ը՝ կին՝ 20-60 տարեկան տարիքային միջակայքով: Հարցման արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու կրթության և վերապատրաստման դերը պահնորդական

գործունեության արդյունավետության ապահովման գործընթացում:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների գերակշիռ մասը՝ 18 մարդ (72%), կրթությունը համարում է կարևոր պահնորդական գործունեության մեջ, իսկ «ոչ» պատասխան չի արձանագրվել: Միևնույն ժամանակ 7 հարցվող (28%) ընտրել է «մասամբ» տարբերակը: Ստացված արդյունքները վկայում են, որ ոլորտում ձևավորված է կրթության կարևորության բարձր գիտակցում, սակայն առկա են որոշ վերապահումներ կրթության բովանդակային կամ կիրառական արդյունավետության վերաբերյալ (Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Կրթության կարևորությունը պահնորդական գործունեության մեջ

Հարցվողներից 19-ը (76%) նշել է, որ ստացած նախնական ուսուցումը բավարար է եղել աշխատանքի արդյունավետ իրականացման համար: Միաժամանակ 2 հարցվող (8%) նշել է «ոչ», իսկ 4-ը (16%)՝ «մասամբ» տարբերակը: Այս տվյալները ցույց են տալիս, որ թեև մեծամասնությունը գոհ է նախնական պատրաստվածությունից, առկա է ուսուցման կատարելագործման անհրաժեշտություն՝ հատկապես՝ գործնական հմտությունների զարգացման ուղղությամբ (Գծապատկեր 2):



Գծապատկեր 2. Նախնական ուսուցման բավարարության գնահատում աշխատանքի արդյունավետ իրականացման համար

Հարցման տվյալների համաձայն՝ բոլոր 25 հարցվողները (100%) նշել են, որ մասնակցում են պարբերական մասնագիտական վերապատրաստումների կազմակերպությունից դուրս: Այս արդյունքը վկայում է մասնագիտական շարունակական զարգացման բարձր մակարդակի և ոլորտում շարունակական կրթության կարևորության գիտակցման մասին (Գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Պարբերական մասնագիտական վերապատրաստումներին մասնակցության մակարդակ

Հարցվողներից 18-ը (72%) կարծում է, որ վերապատրաստումները նպաստում են արտակարգ իրավիճակների կանխարգելմանը, 5-ը (20%) ընտրել է «մասամբ» տարբերակը, իսկ 2-ը (8%)՝ «ոչ»: Բացի այդ՝ 17 հարցվող (68%) նշել է, որ վերապատրաստումների ընթացքում շեշտը դրվում է կանխարգելիչ մոտեցումների վրա, մինչդեռ 8-ը (32%) ընտրել է «մասամբ» տարբերակը:

Այս արդյունքները ցույց են տալիս, որ վերապատրաստման ծրագրերում առկա է կանխարգելիչ բաղադրիչ, սակայն դրա համակարգված և խորացված կիրառման անհրաժեշտությունը դեռևս արդիական է (Գծապատկեր 4 և Գծապատկեր 5):



Գծապատկեր 4. Վերապատրաստումների ազդեցությունը արտակարգ իրավիճակների կանխարգելման վրա



Գծապատկեր 5. Վերապատրաստումների ընթացքում կանխարգելիչ մոտեցումների շեշտադրման գնահատում

Ռիսկերի կանխատեսման և կանխման վերաբերյալ բավարար գիտելիքներ ստանալու մասին «այո» է նշել 16 հարցվող (64%), 7-ը (28%) պատասխանել է «մասամբ», իսկ 2-ը (8%)՝ «ոչ»:

Սա փաստում է, որ ռիսկերի կառավարման ոլորտում անհրաժեշտ է առավել նպատակային և գործնական ուղղվածությամբ ուսուցում (Գծապատկեր 6):



Գծապատկեր 6. Ռիսկերի կանխատեսման և կանխման վերաբերյալ ստացված գիտելիքների բավարարության գնահատում

Հարցվողներից միայն 14-ը (56%) կարծում է, որ ՀՀ-ում պահնորդների կրթության մակարդակը լիովին համապատասխանում է ոլորտի իրական պահանջներին: 7 հարցվող (28%) ընտրել է «մասամբ», իսկ 4-ը (16%)՝ «ոչ» տարբերակները: Այս տվյալները վկայում են կրթական համակարգի բովանդակային և կառուցվածքային բարելավման անհրաժեշտության մասին (Գծապատկեր 7):



Գծապատկեր 7. Հարցման արդյունքներ՝ Հայաստանում պահնորդների կրթության համապատասխանության վերաբերյալ

Հարցվողներից 11-ը (44%) գտնում է, որ կրթված պահնորդը կարող է ավելի արդյունավետ կանխարգելել վտանգները, քան միայն փորձ ունեցող պահնորդը: Միևնույն ժամանակ 9 հարցվող (36%) ընտրել է «մասամբ», իսկ 5-ը (20%)՝ «ոչ»: Արդյունքները ցույց են տալիս, որ կրթությունն ու փորձը դիտարկվում են որպես փոխլրացնող գործոններ՝ արդյունավետ կանխարգելիչ գործունեության իրականացման գործընթացում (Գծապատկեր 8):



Գծապատկեր 8. Հարցման արդյունքներ՝ կրթված պահնորդի արդյունավետության վերաբերյալ

Բաց հարցերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պահնորդները կանխարգելիչ գործունեության համար կարևորում են ոչ միայն մասնագիտական և տեխնիկական գիտելիքները, այլև հաղորդակցման կարողությունները, իրավիճակի արագ գնահատման ունակությունը, հոգեբանական կայունությունը, թիմային աշխատանքը և բարձր պատասխանատվությունը:

Առաջարկվող փոփոխությունների շարքում առավել հաճախ նշվել են գործնական և սիմուլյացիոն վարժանքների ավելացումը, կանխարգելիչ մոտեցումների ուժեղացումը, հոգեբանական և իրավական պատրաստվածության խորացումը, ինչպես նաև վերապատրաստումների պարբերականության բարձրացումը: Սա ցույց է տալիս, որ ոլորտում առկա է կրթական ծրագրերի շարունակական արդիականացման օբյեկտիվ պահանջ:

Այսպիսով՝ իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում մասնավոր պահնորդական գործունեության ոլորտում կրթությունը անվտանգության արդյունավետ ապահովման կարևոր գործոն է: Թեև ոլորտում ձևավորված է մասնագիտական պատրաստման ինստիտուցիոնալ հիմք և ապահովվում է շարունակական կրթություն վերապատրաստումների միջոցով, այնուամենայնիվ առկա է ծրագրերի բովանդակային խորացման և կանխարգելիչ բաղադրիչի ուժեղացման անհրաժեշտություն: Հետազոտության արդյունքները վկայում են, որ կրթությունն ու գործնական փորձը փոխլրացնող գործոններ են, իսկ դրանց համադրումը կարող է էապես բարձրացնել կանխարգելիչ գործունեության արդյունավետությունը և նպաստել անվտանգության համակարգի զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մասնավոր պահնորդական գործունեության մասին ՀՀ օրենք, Երևան, հոդված 3, 2012
2. ՀՀ կառավարության որոշում մասնավոր պահնորդական գործունեության լիցենզավորման կարգը, լիցենզիա ստանալու մասին հայտի և լիցենզիայի ձևերը հաստատելու մասին, Երևան, N 1152, 2012
3. ՀՀ Ոստիկանություն, մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակը, 2020, URL: https://www.police.am/resources/police/uploads/files/protocols/bb01a6919dd4ef0b423bfae112d1bef2.pdf (10.02.2026)